



ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՐԲԱԿԱԼ ՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և 2022 թվականի հունվարի 5-ին հանրային քննարկման է դրվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 574-Ն որոշման [նախագիծը](#) (այսուհետ նաև՝ Նախագիծ), որով նոր խմբագրությամբ ներկայացվել է ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձեռքարկավածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը:

Ձեռքարկավածներին պահելու վայրերի (այսուհետ՝ ՁՊՎ) աշխատանքներում առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ օրենսդրական, որոնք պահանջում են ՁՊՎ-ի ներքին կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) համապատասխանեցում միջազգային օրենսդրությանը: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ՀՔԱՎ գրասենյակ), ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, բազմիցս արձանագրել են ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտումների պարբերական բնույթը:

Թեև Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ վերջինիս ընդունումը պայմանավորված է ՁՊՎ-ների գործունեությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, այնուամենայնիվ որոշ խնդիրներ շարունակում են մնալ չլուծված, որոնք ըստ ոլորտների ներկայացնում ենք ստորև:

1. ՁՊՎ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԵՎ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով սահմանված են ՁՊՎ-ում անձանց բժշկական զննության իրականացման կարգը և դեպքերը: Առաջարկվող կարգավորումների համաձայն՝ անձի բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ ընդունվելու, մարմնի արտաքին զննություն կատարելիս պահվող անձանց մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ հայտնելու դեպքերում: Հերթափոխի ավագի կողմից հրավիրված բուժաշխատողը կատարում է բժշկական զննությունը, որին կարող է մասնակցել նաև ՁՊՎ ընդունվող անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բժշկական զննության արդյունքները բուժաշխատողի կողմից գրանցվում են Ձև 11 գրանցամատյանում, իսկ վարչակազմի կողմից՝ անձնական գործում: Դրա մասին

վարչակազմն անհապաղ իրազեկում է պահվող անձին, քրեական վարույթն իրականացնող մարմնին ու պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

Վկայակոչված կարգավորումները ՀՔԱՎ գրասենյակը գնահատում է խնդրահարուց և միջազգային չափորոշիչներին հակասող այնքանով, որքան որ չեն սահմանում բժշկական գնության իրականացման ժամկետները և հրավիրված բուժաշխատողի կարգավիճակը, չեն երաշխավորում ձերբակալված անձի բժշկական փաստաթղթերի գաղտնիությունը և իր ընտրած բժշկի կողմից՝ ի լրումն ուստիկանության կողմից նշանակված բժշկական անձնակազմի ցանկացած հետազոտության, անկախ բժշկական գնության իրավունքը:

Անձի պատշաճ բժշկական գնության իրավունքի ապահովումը չի սահմանափակվում միայն բանտերով, այլ տարածվում է ազատագրկման այլ վայրերի վրա, ինչպիսիք են ուստիկանական բաժանմունքները և կալանավայրերը¹:

Միջազգային ընդունված կանոնն այն է, որ ազատագրկման վայր (ՁՊՎ կամ ՔԿՀ) մուտք գործելու ցանկացած դեպքում ձերբակալված, կալանավորված անձինք կամ դատապարտյալներն անհապաղ պետք է անցնեն բժշկական գնություն՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով: Ազատությունից զրկված անձանց բժշկական գնության կատարման ժամկետներին ՀՔԱՎ գրասենյակն անդրադարձել էր դեռևս 2020 թվականին ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հրապարակված դիրքորոշման մեջ²:

Եթե դիտարկենք քրեակատարողական հիմնարկներում բժշկական գնության կատարման ժամանակային պահանջները, ապա գործում է «ոչ ուշ, քան 24 ժամ» կանոնը: Այսպես, Կոմիտեի հանձնարարականի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ մուտք գործելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում պետք է անցնեն համալիր բժշկական գնություն պրոֆեսիոնալ բժշկական անձնակազմի կողմից³:

¹ IACHR, Report on the Human Rights of Persons Deprived of Liberty in the Americas, (2011), OAS/Ser. L/V/II, §164.

² Տե՛ս Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

³ Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 to 15 October 2015, par. 81.

Օրինակներ կան, երբ խոշտանգումների և/կամ վատ վերաբերմունքի հնարավոր դեպքերի բժշկական հետազոտություններն իրականացվում են ձեռքակալությունից ոչ ուշ, քան 12 ժամ հետո⁴:

Բժշկական զննությունը պետք է անցկացվի ձեռքակալությունից հետո՝ որքան հնարավոր է շուտ⁵, և անձին ազատությունից գրկման վայր տեղափոխելուց անմիջապես հետո⁶: Խոշտանգումների հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը հայտարարել էր, որ բժշկական զննությունը պետք է անցկացվի անձին կալանավայր կամ ՁՊՎ ընդունվելուն պես, իսկ դրանից հետո՝ կանոնավոր պարբերականությամբ⁷: ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն խորհուրդ է տվել երկրներին արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու, որ արգելանքի տակ գտնվող անձինք բուժաշխատողի կողմից առանց ուշացման հետազոտվեն⁸: Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Կոմիտեն (Կոմիտե) հայտարարել է, որ կարևոր է երաշխավորել արգելանքից ազատված անձանց բժշկական զննության իրավունքը⁹: Կոմիտեն նաև խորհուրդ է տվել անհապաղ խորհրդակցել բժշկի հետ, եթե անձը բժշկական զննում է պահանջում¹⁰:

ՁՊՎ-ում գտնվող անձինք պետք է ունենան բժշկին դիմելու պաշտոնապես ճանաչված իրավունք: Այսինքն, եթե անձը բժշկական զննություն անցնելու պահանջով դիմում է ՁՊՎ վարչակազմին, ապա առանց ուշացման պետք է կանչվի բժիշկը. ոստիկանության աշխատակիցները չպետք է փորձեն գտել նման դիմումները: Բացի այդ, բժշկին դիմելու իրավունքը պետք է ներառի ձեռքակալված անձի՝ համապատասխան ցանկության դեպքում, իր ընտրած բժշկի կողմից հետազոտվելու (ի լրումն ոստիկանության կողմից պատվիրակված ցանկացած բժշկական զննության) իրավունքը¹¹»:

Կոմիտեի 2019 թվականին Հայաստան կատարած այցի արդյունքում կազմված թիվ CPT/Inf (2021) 11 զեկույցում արձանագրվել է, որ Հայաստանում ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի երևույթը դեռևս ամբողջությամբ վերացված չէ: Կոմիտեն 2021 թվականի զեկույցում կրկնել է իր այն առաջարկությունները, որոնք արվել են պարբերաբար 2006, 2008, 2010, 2013 և 2015 թվականների այցելությունների վերաբերյալ զեկույցներում, այն

⁴ Mexico, General Law on Torture, Article 46.

⁵ SPT, Report on the visit of the SPT to Brazil, (2016), UN Doc CAT/OP/BRA/3, § 56.

⁶ IACHR, Principles and Best Practices on the Protection of Persons Deprived of Liberty in the Americas, Principle IX (3).

⁷ IACHR, Principles and Best Practices on the Protection of Persons Deprived of Liberty in the Americas, Principle IX (3).

⁸ CAT, Concluding observations on the second periodic report of the Plurinational State of Bolivia, (14 June 2013), UN Doc CAT/C/BOL/CO/3, § 9 (a).

⁹ CPT, Developments concerning CPT standards in respect of police custody, (2002), § 42.

¹⁰ CPT, Extract from 12th General Report on the CPT's activities, [CPT/Inf (2002) 15], § 42.

¹¹ CPT Standards, p.11-12, §42.



Է բարելավել ոստիկանական կալանավայրերում վնասվածքների զննումը՝ մասնավորապես ապահովելով, որ.

1. բոլոր բժշկական զննումները կատարվում են լսողության և, եթե համապատասխան բժշկական մասնագետը կոնկրետ դեպքում այլ բան չի պահանջում, ոչ բժշկական անձնակազմի տեսողության սահմաններից հեռու.
2. խստորեն պահպանվում է բժշկական փաստաթղթերի գաղտնիությունը:

Նշենք, որ ձերբակալված անձանց վնասվածքների զննման վերաբերյալ առաջարկությունները Կոմիտեի կողմից արվել են հաշվի առնելով ՁՊՎ-ներում տարիներ շարունակ կիրառվող գործելաոճը և կանոնները: Չնայած 2008 թվականի Կանոնակարգում և Նախագծում սահմանված է, որ բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս, այն կրում է ձևական բնույթ և գործնականում չի ապահովում անձի Սահմանադրությամբ և ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով երաշխավորված իրավունքները:

2015 թվականի այցի վերաբերյալ զեկույցում Կոմիտեն հստակ արձանագրել է, որ ՁՊՎ ընդունվող անձանց վրա նկատված վնասվածքների արձանագրման ընթացակարգը դեռևս չի կանխում վատ վերաբերմունքը ՀՀ-ում: Մասնավորապես, ձերբակալված անձաց ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ բժշկական զննումը շարունակվում է պարբերաբար. ձերբակալվածներից նրանց վնասվածքների ծագման վերաբերյալ բացատրությունները սովորաբար չեն պահանջվում կամ չեն գրանցվում, և բժշկական անձնակազմը չի փորձում գնահատել որևէ նման բացատրությունների և բժշկական օբյեկտիվ բացահայտումների միջև համապատասխանության աստիճանը:

Կոմիտեի մշակած չափորոշիչների համաձայն՝ բժշկական անձնակազմը անհրաժեշտության դեպքում կարող է ՁՊՎ-ի վարչակազմի աշխատողին տեղեկացնել (նաև, ընթացիկ քրեական վարույթի կապակցությամբ հետաքննության մարմնին և իրավասու դատախազին), ձերբակալված անձի առողջական վիճակի մասին. այնուամենայնիվ, տրամադրվող տեղեկատվությունը պետք է սահմանափակվի այնքանով, որքանով անհրաժեշտ է ձերբակալված կամ այլ անձի (անց) համար լուրջ վտանգը կանխելու համար, եթե ձերբակալված անձը համաձայն չէ լրացուցիչ տեղեկություններ տրամադրել: Ի լրումն, Կոմիտեն կրկնել է իր առաջարկությունը, որ Հայաստանը պետք է միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ ոստիկանությունում պահվող անձանց բժշկական զննությունից հետո կազմված արձանագրությունները պարունակեն. (i) հաշվետվություն շահագրգիռ անձանց կողմից արված հայտարարությունների վերաբերյալ,

որոնք առնչվում են բժշկական գննությանը (ներառյալ նրանց առողջական վիճակի նկարագրությունը և չարաշահումների մասին ցանկացած պնդում), (ii) մանրակրկիտ հետազոտության վրա հիմնված օբյեկտիվ բժշկական բացահայտումների ամբողջական հաշվետվություն, և (iii) բժշկական աշխատողի դիտարկումը (i) և (ii) կետերի լույսի ներքո՝ նշելով արված ցանկացած հայտարարությունների և բժշկական օբյեկտիվ բացահայտումների միջև համապատասխանությունը: Կոմիտեն նաև վերահաստատել նախկինում արված իր առաջարկությունը, որ ՁՊՎ ժամանաց անձանց բժշկական գննությունը պետք է իրականացվի ոստիկանությունից անկախ բժշկական անձնակազմի կողմից:

Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Շվեցարիայում գործող կարգավորումները, որոնք համապատասխանում են միջազգային չափորոշիչներին: Շվեցարիայի օրենսդրության համաձայն՝ ձերբակալվածի բժշկական գննության ժամանակ հայտնաբերված ֆիզիկական բռնության նշանները պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորվեն: Բժիշկներն իրենց զեկույցներում պետք է հստակ տարանջատեն պացիենտի հայտարարությունները (այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են վնասվածքների), (սուբյեկտիվ) գանգատները և (օբյեկտիվ) կլինիկական և պարակլինիկական տվյալները (վնասվածքների ծավալը, տեղայնացումը և տեսքը, ռենտգենյան ճառագայթները, լաբորատոր տվյալներ և այլն): Եթե նրանց ուսուցումը և/կամ փորձը թույլ են տալիս դա, բժիշկները պետք է նշեն, թե արդյոք հիվանդի հայտարարությունները համապատասխանում են բժշկական արդյունքներին: Այս տեղեկատվությունը պետք է անհապաղ փոխանցվի ոստիկանության կամ բանտի վարչակազմի վերահսկողության համար պատասխանատու մարմիններին: Ձերբակալվածն իրավունք ունի ցանկացած պահի ստանալ համապատասխան բժշկական եզրակացության պատճենը¹²:

Շվեցարիայում գործող կանոնակարգումների համաձայն՝ բժիշկները ձերբակալված անձի համաձայնության դեպքում պետք է աշխատեն պատասխանել բանտի կամ ոստիկանության աշխատակիցների ցանկացած օրինական հարցերին: Այն դեպքերում, երբ ձերբակալված անձը դեմ է տեղեկատվության բացահայտմանը, և դա կարող է վտանգ ներկայացնել իր անվտանգությանը կամ երրորդ անձանց, բժիշկները կարող են դիմել իրավասու մարմնին՝ խնդրելով ազատել իրենց տվյալները գաղտնի պահելու պարտավորությունից, եթե նրանք իրենց պարտքն են համարում տեղեկացնել երրորդ անձանց և, մասնավորապես, անվտանգության ծառայության պատասխանատու դեկավարներին կամ անդամներին: Նման դեպքերում ձերբակալված անձը պետք է

¹² Medical practice in respect of detained persons. Swiss Academy of Medical Sciences (SAMS) House of Academies, 2018, p. 10.

տեղեկացվի, որ իրավասու մարմիններից պահանջվել է հրաժարվել գաղտնիության պայմանից: Բացառիկ դեպքերում, եթե երրորդ անձի կյանքը կամ ֆիզիկական առողջությունը լուրջ սպառնալիքի տակ է, բժիշկներն իրենք կարող են որոշում կայացնել գաղտնիության խախտման մասին և այդ մասին ուղղակիորեն զեկուցել իրավասու մարմիններին կամ ռիսկի տակ գտնվող երրորդ անձին¹³:

Միջազգային օրենսդրությունը պահանջում է, որ բժշկական զննությունները ՁՊՎ-ներում կամ ՔԿՀ-ներում կատարվեն այնպիսի բժիշկների կողմից, որոնք ունեն անհրաժեշտ անկախություն և մասնագիտական գիտելիքներ:

Անկախություն. Արգելանքի տակ գտնվող անձինք պետք է իրավունք ունենան պահանջելու անցկացնել անկախ բժշկական զննություն: Նախընտրելի է, որ զննումն իրականացվի բժշկական մասնագետի կողմից, որը անկախ է ձերբակալված/կալանավորված անձանց պահող մարմիններից: ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն, Մարդու իրավունքների կոմիտեն և Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողովը բժիշկներին խորհուրդ է տվել գործել անկախ: Առաջարկվել է դատաբժշկական ծառայությունները հանձնարարել դատական կամ այլ անկախ մարմնին, այլ ոչ թե ձերբակալված/կալանավորված անձանց պահելու մարմնին, ինչպիսին է ոստիկանությունը: Առաջարկվել է նաև, որ առողջապահական ծառայությունները ունենան կառուցվածքային և գործառութային անկախություն:

Մասնագետի գիտելիքներ. Բժշկական հետազոտությունը պետք է իրականացվի իրավասու բժիշկի կողմից, որն ունի կրթություն և անցել է վերապատրաստում խոշտանգումների արգելման և Ստամբուլյան արձանագրության համաձայն՝ պատշաճ փաստաթղթավորման բնագավառում¹⁴:

Այսպիսով, ՁՊՎ ընդունվելիս կամ այնտեղ գտնվելու ժամանակ ձերբակալված անձինք պետք է իրավունք ունենան միջազգային չափորոշիչներին համապատասխան անցնելու բժշկական զննություն առողջապահության ոլորտի անկախ մասնագետի կողմից անհապաղ, ՁՊՎ մուտք գործելուց կամ բժշկական զննություն անցնելու պահանջով դիմում ներկայացնելուց հետո:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները, առաջարկում ենք.

1. Սահմանել, որ ՁՊՎ ընդունվող անձինք ՁՊՎ մուտք գործելուց հետո կամ բժշկական զննություն անցնելու պահանջով դիմում ներկայացնելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ենթարկում են բժշկական զննության:

¹³ Medical practice in respect of detained persons. Swiss Academy of Medical Sciences (SAMS) House of Academies, 2018, p. 9-10.

¹⁴ https://www.apc.ch/sites/default/files/publications/doc-3_right-to-a-medical-examination_en_final.pdf

2. Կատարել ՀՀ իշխանություններին ուղղված Կոմիտեի առաջարկությունները, մասնավորապես, ապահովել, որ ոստիկանությունում պահվող անձանց բժշկական զննությունից հետո կազմված արձանագրություններում լրացվում են i) տվյալ անձի կողմից ներկայացված հայտարարությունների շարադրանքը, որոնք վերաբերում են բժշկական զննմանը (ներառյալ նրա առողջական վիճակի նկարագիրը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած պնդումներ), ii) հանգամանալի զննության վրա հիմնված բժշկական օբյեկտիվ եզրակացությունների լրիվ շարադրանքը և iii) առողջապահության ոլորտի մասնագետի դիտարկումները i)-ի և ii)-ի լույսի ներքո՝ մատնանշելով ներկայացված որևէ զանգատի և բժշկական օբյեկտիվ եզրակացության միջև համապատասխանությունը: Արձանագրությունը նաև պետք է ներառի իրականացված լրացուցիչ հետազոտությունների արդյունքները, մասնագիտական խորհրդակցությունների մանրամասն եզրակացությունները և վնասվածքների բուժման նպատակով իրականացվող բուժման և իրականացվող ցանկացած այլ ընթացակարգի նկարագիրը:
3. Ապոհովել, որ բժշկական զննությունն իրականացվի ՀՀ ոստիկանությունից անկախ և իրավասու բժշկական անձնակազմի կողմից:
4. Ապահովել ՁՊՎ-ներում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացումը Ստամբուլյան արձանագրության չափանիշների համաձայն:
5. Երաշխավորել ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում իր ընտրած բժշկի կողմից առանձին բժշկական զննություն անցնելու իրավունքը ի լրումն ոստիկանության կողմից պատվիրակված ցանկացած բժշկական զննության:
6. Սահմանել, որ բժշկական զննության արդյունքները տրամադրվում են ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի անդամներին պատճառաբանված դիմումի հիման վրա:
7. Ներդնել ձեռքակալված անձանց բժշկական զննության արդյունքների գաղտնիությունը ապահովող իրավական և վարչական կառուցակարգեր Կոմիտեի մշակած չափորոշիչների համաձայն: Մասնավորապես, ապահովել, որ խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի դրսևորումների արձանագրման դեպքում բժշկական զննություն իրականացնող բժիշկը դեպքի մասին անհապաղ զեկուցում է ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին (ՀՀ դատախազություն, ՀՀ ոստիկանություն), ինչպես նաև քրեական վարույթն

իրականացնող մարմինն: Բժշկական անձնակազմը պետք է ձեռքբերված անձին տեղեկացնի զեկուցելու պարտավորության առկայության մասին, և որ համապատասխան մարմիններին զեկուցելը չի փոխարինում անձի կողմից պաշտոնական բողոք ներկայացնելուն:

8. Սահմանել, որ բժշկական գնությունների արդյունքները պահվում են ձեռքբերված անձի անձնական բժշկական քարտում, որը չպետք է հասանելի լինի ոստիկանության աշխատակիցների համար: Ոստիկանության աշխատակիցներին տրամադրված ցանկացած բժշկական տեղեկություն պետք է սահմանափակվի միայն այն տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է ձեռքբերված անձի համար լուրջ վտանգը կանխելու համար:

2. ԽՈՒՉԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Նախագծով նախատեսվում է ՁՊՎ-ում պահվող անձանց նկատմամբ իրականացվող խուզարկության 2 տեսակ՝ անձնական խուզարկություն և խցի խուզարկություն: Անձնական խուզարկությունը՝ որպես խուզարկության առանձին տեսակ, անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա գտնվող առարկաները և փաստաթղթերը որոնելուն և վերցնելուն ուղղված գործողություն է¹⁵: Համաձայն Նախագծի 15-րդ կետի՝ «ՁՊՎ-ի անվտանգությունն ապահովելու, այդ թվում՝ սույն կանոնակարգով արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ներթափանցումը ՁՊՎ բացառելու նպատակով, ՁՊՎ վարչակազմի կողմից իրականացվում է ՁՊՎ ընդունվող, պահվող անձանց անձնական խուզարկություն»:

Նախագծի 17-րդ կետի համաձայն. «17. Պահվող անձինք անձնական խուզարկության և մարմնի արտաքին գնության են ենթարկվում նաև ՁՊՎ-ից ազատվելիս, տարածքից իրավական ցանկացած այլ հիմքով դուրս գալիս, տեսակցությունից, փաստաբանի կամ պաշտպանի հետ հանդիպելուց և զբոսանքից առաջ ու հետո: Մարմնի արտաքին գնություն կատարելիս պահվող անձանց մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ հայտնելու դեպքում հերթափոխի ավագը հրավիրում է բուժաշխատող»:

Նախ նշենք, որ անհասկանալի է, թե «տարածքից դուրս գալիս» ասվածն ի՞նչ է ենթադրում, ի՞նչ տարածք է նկատի առնում Նախագիծը. ՁՊՎ-ն նկատի ունենալու դեպքում՝ առաջարկում ենք նշել «ՁՊՎ-ի տարածքից»՝ նորմի կամայական և սուբյեկտիվ մեկնաբանություններից խուսափելու նպատակով:

¹⁵ Տե՛ս Ենգիբարյան Վ., Խուզարկություն կատարման քրեադատավարական եվ տակտիկական հիմնական պայմանները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. –Եր., ԵՊՀ, 2017, էջ 450:



Նախագծի 90-րդ կետի համաձայն՝ «Խցերից դուրս բերելու և վերադարձնելու յուրաքանչյուր դեպքում պահվող անձինք ենթարկվում են անձնական խուզարկության»: Թեև Նախագծի հեղինակները 15-րդ և 17-րդ կետերով փորձել են նախատեսել անձնական խուզարկության սպառիչ դեպքեր (ՁՊՎ ընդունվելիս, ՁՊՎ-ից ազատվելիս, տեսակցությունից, փաստաբանի կամ պաշտպանի հետ հանդիպելուց և զբոսանքից առաջ ու հետո), այնուամենայնիվ, 90-րդ կետով խցից դուրս գալու և վերադառնալու ցանկացած դեպքում անձնական խուզարկության անցկացումը այդ հիմքերը ի չիք է դարձնում, քանի որ ստացվում է, որ ցանկացած պահի հնարավոր է անձնական խուզարկություն իրականացնել՝ անկախ անհրաժեշտությունից և համապատասխան հիմքերի առկայությունից:

Հարկ է նշել, որ խուզարկությունը, որպես ՁՊՎ-ում պահվող անձի իրավունքներին և ազատություններին խիստ միջամտող գործողություն, առանց բավարար հիմքերի և անհրաժեշտության, սուբյեկտիվ հայեցողությամբ և ցանկացած պահի իրականացվել չի կարող, ինչի մասին է վկայում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածը, որն օգտագործում է «բավարար հիմքեր» արտահայտությունը. համաձայն այդ հոդվածի՝ «Շինությունում խուզարկություն կատարելիս բավարար հիմքերի առկայության դեպքում քննիչը կարող է կատարել անձնական խուզարկություն և վերցնել այդտեղ գտնվող անձի հագուստի մեջ, իրերում կամ մարմնի վրա գտնվող առարկաները և փաստաթղթերը, որոնք գործով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն. «Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար սահմանված իրավունքները, ազատությունները և պարտականությունները՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով նախատեսված սահմանափակումներով»: Հետևաբար ձերբակալված անձի իրավունքների, ազատությունների սահմանափակումները սահմանվում են միայն օրենքով, իսկ Կանոնակարգը լրացուցիչ սահմանափակումներ նախատեսել չի կարող:

Անձնական խուզարկությունը կարող է հավասարվել խոշտանգումների, եթե այն իրականացվում է անձին լուրջ հոգեկան տառապանքներ կամ ֆիզիկական ցավ պատճառելու համար: Վտանգը, որ անձնական խուզարկությունը կարող է որակվել որպես խոշտանգում կամ այլ դաժան վերաբերմունք հատկապես մեծ է այն իրավիճակներում, երբ նման խուզարկությունն իրականացվում է պարբերաբար, առանց ծայրահեղ

անհրաժեշտության, անհամաչափորեն կիրառվում խոցելի խմբերի նկատմամբ և իրականացվում հակառակ սեռի աշխատողի կողմից¹⁶:

Անձնական խուզարկության իրականացումը խուզարկվող անձի մերկացմամբ պետք է իրականացվի նույն սեռի անձի կողմից: Քանի որ ԼԳԲՏԻ¹⁷ անձինք նույն սեռի աշխատակիցների կողմից անձնական խուզարկության ընթացքում կարող են բախվել բռնության և նվաստացման, այն անձինք, ովքեր իրենց համարում են ԼԳԲՏԻ, պետք է ունենան իրավունք ընտրելու, թե որ սեռի ներկայացուցիչը կիրականացնի խուզարկությունը¹⁸:

Կոմիտեն շեշտում է, որ անձնական խուզարկության իրականացումը խուզարկվող անձի մերկացմամբ իրենից ներկայացնում է ինվազիվ և պոտենցիալ նվաստացնող ընթացակարգ: Այս առումով, այդպիսի խուզարկությունները պետք է հիմնված լինեն ռիսկերի անհատական գնահատման վրա, համապատասխան են հստակ չափանիշների և ենթարկվեն խիստ վերահսկողության: Պետք է գործադրվեն բոլոր ողջամիտ ջանքերը՝ իրավիճակի անհարմարությունը նվազագույնի հասցնելու համար¹⁹:

Ձերբակալված անձանց խուզարկության նպատակի, դեպքերի և հիմքերի վերաբերյալ առանձնահատուկ օրենսդրական կարգավորումը բացակայում է, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անձնական խուզարկության կարգավորումը բացառապես մի նպատակի է ուղղված՝ քննիչի կողմից ապացուցողական նշանակություն ունեցող առարկաների և իրերի հայտնաբերմանը, մինչդեռ ձերբակալվածի անձնական խուզարկությունը այլ սուբյեկտների կողմից և այլ նպատակով իրականացվող վարութային գործողություն է, ինչը ենթակա է կարգավորման «Ձերբակալվածների և կալանավորված անձնաց մասին» օրենքով կամ Քրեական դատավարության օրենսգրքով, ուստի անհրաժեշտ է նշված օրենսդրական ակտերում ներդնել անձնական խուզարկության համալիր կարգավորում՝ ներառելով Կանոնակարգի հատվածային կարգավորումները և ամբողջացնելով օրենքում:

Նախագիծը չի կարգավորել նաև այն դեպքերը, երբ կարող է իրականացվել խցի խուզարկություն՝ կրկին խցի խուզարկության հիմքերն ու անհրաժեշտությունը թողնելով ՁՊՎ վարչակազմի հայեցողությանը:

¹⁶ Guidance Document on the Nelson Mandela Rules: Implementing the United Nations Revised Standard Minimum Rules for the Treatment of Prisoner, 2018, p. 70.

¹⁷ Լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս.

¹⁸ Представители ЛГБТИ-сообщества в местах лишения свободы: основы превентивного мониторинга. Ресурсное пособие по мониторингу в местах содержания под стражей, с. 10.

¹⁹ Report to the Government of the Netherlands on the visit to the Netherlands carried out by the European Committee for the Prevention of Torture [Доклад правительству Нидерландов по итогам визита Европейского комитета по предотвращению пыток в Нидерланды], 9 August 2012, CPT/Inf(2012) 21, para. 32.

ԵՄ նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 ձանձնարարականի 54.2 կետի համաձայն. «Ազգային օրենսդրությամբ պետք է նախատեսվեն այն դեպքերը, երբ խուզարկություններն անհրաժեշտ են, ինչպես նաև դրանց բնույթը»²⁰:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք սահմանել, որ բավարար հիմքերի և համապատասխան պատճառաբանության առկայության դեպքում միայն կարող է իրականացվել խուզարկություն: Խցի և անձնական խուզարկությունը կարող են արդարացվել այնքանով, որ դրանք կվերաբերեն գործին և կհամարվեն անհրաժեշտ:

Խուզարկությունն այնպիսի քննչական գործողություն է, որն էապես սահմանափակում է քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը, հետևաբար դրա կատարման համար պետք է առկա լինեն անհրաժեշտ փաստական հիմքեր, այսինքն՝ այնպիսի տվյալներ, որոնք կվկայեն դրա կատարման անհրաժեշտության մասին²¹:

Միջազգային հանրության կողմից մշակվել և ընդունվել են անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված երաշխիքներ, որոնցից են՝

1. անձնական խուզարկությունը պետք է իրականացվի հատուկ առանձնացված սենյակում,
2. կանանց և անչափահասների անձնական խուզարկության հետ կապված պետք է ընդունվեն հատուկ կարգավորումներ,
3. խուզարկություններն անձի մերկացմամբ և մարմնի խոռոչների գննումները պետք է իրականացվեն միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում,
4. խրախուսվում է մշակել և օգտագործել համապատասխան այլընտրանքային գննման/խուզարկման մեթոդներ, որոնք կապ չունեն մարմնի ինվազիվ խուզարկության հետ,
5. անձնական խուզարկությունը չպետք է օգտագործվի՝ ահաբեկելու, վախեցնելու կամ կալանավորված անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը անիրավաչափորեն խախտելու նպատակով,
6. անձնական խուզարկությունը կատարվում է այնպես, որ ապահովվի հետախուզման մեջ գտնվող անձի արժանապատվությունը և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն հարգելու իրավունքը,
7. անձնական խուզարկությունը պետք է իրականացվի միայն որակավորված անձնակազմի կողմից,

²⁰ Հասանելի է՝ <https://rm.coe.int/16806f5b92> :

²¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2, Հեղ. Խումբ: Գիտ.խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր., 2018, էջ 201:

8. անձնական խուզարկության ընթացքում ոչ մի դեպքում չի կարող պահանջվել, որ խուզարկվող անձը ցանկացած պահի ամբողջովին մերկ լինի՝ խուսափելու համար հնարավոր նվաստացնող իրավիճակից: Օրինակ, նման խուզարկությունները կարող են իրականացվել 2 փուլով՝ մարմնի վերին և ստորին հատվածների հաջորդական մերկացմամբ, որպեսզի կալանավորված անձը ստիպված չլինի ամբողջովին մերկ մնալ համապատասխան աշխատակիցների ներկայությամբ,
9. անձի անձնական խուզարկությունն իրականացվում է նույն սեռին պատկանող ծառայողի կողմից,
10. օգտագործել ուլտրաձայնային և այլ սկաներներ՝ որպես մարմինը զննելու հնարավոր այլընտրանք²²,
11. անձնական խուզարկություն իրականացնող ծառայողները պետք է պատշաճ պատրաստված լինեն: Անհրաժեշտ է արդյունավետ վերահսկողություն իրականացնել խուզարկությունների իրականացման նկատմամբ՝ կանոնների և նորմերի արդար ու հետևողական պահպանումն ապահովելու, ինչպես նաև անձին պաշտպանելու՝ վատ վերաբերմունքից ու խտրականությունից:
12. խուզարկությունը՝ զուգորդված անձի մերկացմամբ և մարմնի խոռոչների զննությամբ, պետք է իրականացվի նորմալ սանիտարական պայմաններում և փակ դռների հետևում, կալանավորված այլ անձանց և աշխատակիցների աչքի համար անտեսանելի սենյակում, բայց ոչ ամբողջությամբ մեկուսացված արտաքին աշխարհից: Փորձագետները շեշտում են, որ այդ տարածքները պետք է նախագծված լինեն այնպես, որ հավասարակշռված լինեն «անձանոթ հայացքներից պաշտպանվելու և անվտանգության նկատառումները, բայց և խուզարկվողն իրեն չզգա թակարդի գոհ»²³:

Բացի այդ, Նախագիծը խուզարկության արձանագրություն կազմելու կարգավորում չի նախատեսում խուզարկության իրականացման յուրաքանչյուր դեպքում, ինչը նույնպես խնդրահարույց է:

Նշենք, որ անձնական խուզարկությանը զուգահեռ, Նախագծի 17-րդ կետի համաձայն, իրականացվում է նաև մարմնի արտաքին զննություն «տարածքից» դուրս գալու ցանկացած դեպքում: Անհասկանալի է, թե ինչպես է հիմնավորվում ձերբակալված անձի

²² Statement on Body Searches of Prisoners [Заявление об обысках с обследованием полостей тела заключенных]. World Medical Association, October 1993 (revised May 2005, October 2016), www.wma.net/policies-post/wma-statement-on-body-searches-of-prisoners.

²³ Maiello L., Carter S. ‘Minus the urinals and painted pink?’ What should a women’s prison look like? [Без писсуаров, но в розовых тонах? (Какой должна быть тюрьма для женщин?)]. Penal Reform International blog, 9 December 2015, www.penalreform.org/blog/10020.

տեղաշարժի ցանկացած դեպքում անձնական խուզարկության և մարմնի արտաքին զննության անցկացումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) հստակ նշել է, որ անձնական խուզարկության իրականացումը խուզարկվող անձի մերկացմամբ կարող է որակվել որպես նվաստացնող վերաբերմունք, երբ այն արդարացված չէ հիմնավոր պատճառաբանությամբ, անվտանգության նկատառումներով կամ դրա իրականացման եղանակով²⁴: Դատարանը նաև ընդունել է, որպեսզի անձնական խուզարկությունը համարվի նվաստացուցիչ կամ վիրավորական, «կարող է բավարար լինել, որ տուժողը իրեն նվաստացած զգա ոչ թե այլ անձանց, այլ իր սեփական աչքերի առաջ»²⁵:

3. ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՁՊՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

Նախագծի 8-րդ կետի համաձայն. «8. Թերություններով կամ ոչ լիարժեք լրացված ձերբակալման արձանագրությունով կամ ձերբակալման մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումով կամ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումով անձինք ընդունվում են ՁՊՎ, որից հետո թերությունները վերացնելու համար գրություն է ուղարկվում համապատասխան մարմին»:

Նշված կարգավորումն էապես տարբերվում է գործող նորմից, համաձայն որի՝ «8. ՁՊՎ չեն ընդունվում այն անձինք, որոնց վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի որոշումը կամ ձերբակալման արձանագրությունը, կամ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումը լրացված են խախտումներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131¹-րդ հոդվածի համաձայն. «1. Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը այն կազմելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին: 2. Արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը,

²⁴ Iwanczuk v. Poland [Иванчук против Польши], Application no. 25196/94, 15 November 2001; Shennawy v. France [Шеннави против Франции], Application no. 51246/08, 20 January 2011; Valasina v. Lithuania [Валасина против Литвы], Application no. 44558/98, 24 July 2001; Frerot v. France [Ферро против Франции], Application no. 70204/01, 12 June 2007.

²⁵ Tyrer v. UK [Тайрер против Соединенного Королевства], Application no. 5856/72, 25 April 1978, para. 32.



ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձեռքակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձեռքակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձեռքակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը ձեռքակալման արձանագրության ուղղման կարգ չի նախատեսում, միաժամանակ պարտավորեցնում է ձեռքակալման արձանագրությունը կազմելուց 1 ժամ հետո այն ստորագրությամբ հանձնել ձեռքակալված անձին: Առանց ժամկետների նախատեսման և համապատասխան ընթացակարգի առկայության խախտումներով լրացված ձեռքակալման արձանագրության հիման վրա անձին ՁՊՎ ընդունելը և հետո «թերությունները վերացնելու համար համապատասխան մարմին գրություն ուղարկելը» խնդրահարույց է, քանի որ այն չունի համապատասխան օրենսդրական հենք և չի պարունակում կոնկրետ և հստակ ժամկետներ արձանագրությունում/որոշման մեջ թերությունների վերացման և դրանք ձեռքակալված անձին, ինչպես նաև ՁՊՎ հանձնելու վերաբերյալ: Բացի այդ ձեռքակալված անձը առաջարկվող կարգավորմամբ զրկված է լինելու արձանագրության/որոշման կազմանը անմիջական մասնակցություն ունենալու և այն ծանոթանալու հնարավորությունից, եթե փաստաթուղթը լրացվել է թերություններով կամ խախտումներով:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է թողնել գործող կարգավորումը, այն է. «8. ՁՊՎ չեն ընդունվում այն անձինք, որոնց վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի որոշումը կամ ձեռքակալման արձանագրությունը, կամ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումը լրացված են խախտումներով»:

4. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՆՅՈՒԹԱԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Նախագծի 27-րդ կետի համաձայն՝ «Անձնական հիգիենայի համար պահվող անձինք ապահովվում են տաք ջրով և մինչև 15 րոպե տևողությամբ ցնցուղով լոգանք ընդունելու հնարավորությամբ: Սպիտակեղենի և անկողնային պարագաների լվացման համար ՁՊՎ-ներն ապահովվում են լվացքի մեքենայով և լվացող ու ախտահանող նյութերով»:

15 րոպե տևողություն սահմանելու կարգավորման հիմնավորումը Նախագիծը չի պարունակում: Բացի այդ, Նախագծում չի նշվում, թե ինչ պարբերականությամբ է ապահովվում լոգանք ընդունելու հնարավորությունը: Առաջարկում ենք «մինչև 15 րոպե» բառերից առաջ ավելացնել «ամեն օր» բառերը:

Նախարարների կոմիտեի անդամ պետություններին Եվրոպական բանտային կանոնների մասին Rec(2006)2-rev հանձնարարականի 19.4-րդ կետի համաձայն՝ «19.4 Պետք



է տրամադրվեն համապատասխան հարմարություններ, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա լոզանք կամ ցնցուղ ընդունել կլիմայական պայմաններին համապատասխան ջերմաստիճանում, հնարավորության դեպքում՝ ամեն օր, բայց առնվազն շաբաթը երկու անգամ (կամ ավելի հաճախ, եթե անհրաժեշտ է) ընդհանուր հիգիենայի շահերից ելնելով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննելով Անանև և այլոք ընդդեմ Ռուսաստանի գործը, արձանագրել է. «158. Դատարանը հաճախ նշել է, որ լոզանք ընդունելու ժամանակը, որը սովորաբար տրամադրվում է Ռուսաստանի բանտարկյալներին, սահմանափակվել է շաբաթական մեկ անգամ տասնհինգից քսան րոպեով և ակնհայտորեն անբավարար է եղել պատշաճ մարմնական հիգիենայի պահպանման համար: Լոզանքի կազմակերպման ձևը բանտարկյալներին տարրական գաղտնիություն չէր ապահովում, քանի որ նրանց խմբով տանում էին լոզասենյակներ, մեկը մյուսի հետևից, և գործող ցնցուղների թիվը երբեմն չափազանց քիչ էր բոլորին տեղավորելու համար²⁶: Դատարանը նշված դեպքը համարել է ազատագրված անձանց նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք վերացնել լոզանք ընդունելու ժամկետային սահմանափակումը՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ձերբակալված անձն ունի հասանելիություն լոզարանին և գուգարանին առանց սահմանափակումների, իրավունք ունի կանոնավոր լոզանք կամ ցնցուղ ընդունել կլիմայական պայմաններին համապատասխան ջերմաստիճանում՝ հիգիենայի անհրաժեշտությունից ելնելով, առնվազն օրական 15 րոպե տևողությամբ:

5. ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑԻՑ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ, ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Նախագծի 45-ից 47-րդ կետերի համաձայն. «45. ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողները շուրջօրյա ծառայության ընթացքում պարտավոր են պահվող անձանցից ընդունել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր առաջարկություններ, դիմումներ և բողոքներ: Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, ՁՊՎ-ի վարչակազմին և այլ մարմիններին կամ գերատեսչություններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները գրանցվում են մատյանում՝ համաձայն Ձև 19-ի և զեկուցվում Պետին: Վերջինս միջոցներ է ձեռնարկում դրանց ընթացք տալու համար: 46. Հանրային իշխանության մարմիններին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքներն ուղարկվում են ՁՊՎ-ի վարչակազմի, փաստաբանի կամ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով: 47. Քրեական վարույթն

²⁶ Case of Ananyev and Others v. Russia, 2012, par. 158.



իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ ուղղված բողոքները, ինչպես նաև ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ուղարկվում են հասցեատիրոջն անհապաղ»:

Նախագծի 45-րդ կետում սահմանված պահվող անձանց կողմից տարբեր մարմիններին հասցեագրված դիմումներին և բողոքներին Պետի կողմից ընթացք տալու ժամկետները սահմանված չեն, միայն նախատեսված է, որ «Պետը միջոցներ է ձեռնարկում դրանց ընթացք տալու համար»: Առաջարկում ենք սահմանել, որ 45-րդ և 46-րդ կետերում նշված մարմիններին, գերատեսչություններին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները ուղարկվում են հասցեատիրոջն անհապաղ»:

6. ՁՊՎ-ՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն բաժնի դրույթներում տեղ են գտել միայն ՁՊՎ-ում հղի, իրենց մոտ երեխաներ ունեցող կանանց պահելու պայմանները և անչափահասներին պահելու որոշ պահմաններ, մինդեռ կանանց պահելու պայմանների առանձնահատկությունների վերաբերյալ կարգավորումները Նախագծում բացակայում են ի հեճուկս նրա, որ միջազգային չափանիշները ներառում են բազմաթիվ առանձնահատկություններ:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշների համաձայն՝ «ազատագրված կանայք պետք է պահվեն այնպիսի ապրելատեղերում, որոնք ֆիզիկապես առանձնացված են նույն հիմնարկում պահվող տղամարդկանցից: Այնուամենայնիվ, որոշ պետություններ սկսել են միջոցներ ձեռնարկել զույգերին (որոնցից յուրաքանչյուրը ազատագրված է) միասին տեղավորելու ուղղությամբ և/կամ, որպեսզի ուղղիչ հիմնարկներում այս կամ այն չափով համատեղ պահվեն տարբեր սեռի ներկայացուցիչները: ԽԿԿ-ն ողջունում է այսպիսի առաջադեմ քայլերը այն պայմանով, որ նրանք կատարվեն տվյալ ազատագրված անձանց համաձայնությամբ, նրանց զգուշավոր ընտրությամբ և համապատասխան հսկողությամբ²⁷:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 8-րդ կետի համաձայն. «8. Բանտարկյալների տարբեր կատեգորիաները պահվում են առանձին հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի առանձին մասերում, հաշվի առնելով նրանց սեռը,

²⁷ Council of Europe: Committee for the Prevention of Torture, The CPT standards, CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2015, p. 141.

տարիքը, նախնական դատվածությունը, բանտարկության իրական պատճառները և նրանց հետ նախատեսված վարվեցողությունը: Այսպիսով, ա) հնարավորության դեպքում կանանց և տղամարդկանց պետք է պահել առանձին հիմնարկներում, բ) եթե կանայք և տղամարդիկ պահվում են նույն հիմնարկում, ապա կանանց պետք է տեղավորել կատարելապես առանձին մասնաշենքերում, գ) չդատապարտված բանտարկյալներին պետք է տեղավորել դատապարտյալներից առանձին, դ) այն անձանց, ովքեր դատվել են պարտքի հանձնառությունը չկատարելու համար, և քաղաքացիական գործերով մյուս բանտարկյալներին պետք է տեղավորել քրեական հանցագործություն կատարած անձանցից առանձին: ե) մանկահասակ իրավախախտներին պետք է պահել մեծահասակներից առանձին»:

ՄԱԿ-ի Կանոնները բանտարկյալ կանանց հետ վարվեցողության և այլընտրանքային պատժամիջոցների վերաբերյալ (Բանգկոկի կանոններ) նույնպես ուղենիշ են հանդիսանում անազատության մեջ գտնվող կանանց նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ:

Բացի նրանից, որ տղամարդիկ և կանայք պետք է առանձնացված պահվեն, նաև անհրաժեշտ է ամրագրել, որ կանանց նկատմամբ հսկողությունը չպետք է իրականացվի տղամարդ հսկիչների կողմից համաձայն ստորև նշվող կանոնի. «85. Տղամարդիկ և կանայք պետք է հավասարակշռված կերպով ներկայացված լինեն բանտի անձնակազմում»²⁸:

7. ՊԱՇՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՅՕԹՅԱ ՉԲՈՍԱՆՔԸ

Նախագծի 80-րդ կետի համաձայն. «Պետի կարգադրությամբ զբոսանքը կարող է ժամկետից շուտ դադարեցվել կամ դրա տևողությունը կարող է կրճատվել եղանակային անբարենպաստ պայմանների, արտակարգ իրավիճակների, ինչպես նաև իրադրության բարդացման դեպքերում (փախուստներ, ինքնասպանության դեպքեր և այլն)»:

Նշենք, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում ձերբակալված անձանց զբոսանքի սահմանափակման հնարավորություն և դեպքեր նախատեսված չեն, մինչդեռ Նախագծով, ի թիվս այնլի, զբոսանքի տևողության կրճատման կամ դադարեցման հիմք է սահմանված «իրադրության բարդացումը» և այնուհետև ներկայացվել է այդ բարդացումների ոչ սպառիչ ցանկ: «Իրադրության բարդացում» եզրույթը բավարար չափով որոշակի և հստակ չէ, անհրաժեշտ է սահմանել այդ դեպքերի ցանկը և ոչ թե տալ թվարկման բաց ցանկ՝ նշելով «և այլն» բառերը: ԽԿԿ չափանիշները նախատեսում են ամենօրյա առնվազն 1-ժամյա զբոսանքի կարևորությունը առանց բացառության՝

²⁸ Council of Europe: Committee of Ministers, Recommendation Rec(2006)2-rev of the Committee of Ministers to Member States on the European Prison Rules, para. 85.



միաժամանակ նշելով, որ բացօթյա տարածքները պետք է հնարավորինս պաշտպանված լինեն անբարենպաստ եղանակային պայմաններից:

ԽԿԿ չափանիշների 48-րդ կետի համաձայն. «Հատուկ պետք է նշել բացօթյա պայմաններում անցկացվող ժամանակի կարևորությունը: Ազատագրված անձանց ամենօրյա բացօթյա առնվազն մեկժամյա զբոսանքի պահանջը ամենուր ընդունված առաջնահերթ իրավունքի երաշխիք է (նախընտրելի է, որ սա կազմի միջոցառումների ավելի լայն ծրագրի մի մաս): ԽԿԿ-ն ցանկանում է շեշտել, որ բոլոր ազատագրված անձինք առանց բացառության (այդ թվում նաև խցերում որպես պատիժ մեկուսացվածները) պետք է ամեն օր հնարավորություն ունենան որոշ ժամանակ անցկացնել դրսում: Նմանապես ակնհայտ է, որ բացօթյա տարածքները պետք է լինեն բավարար չափսի և հնարավորինս պաշտպանված վատ եղանակից»:

Նախարարների կոմիտեի անդամ պետություններին Եվրոպական բանտային կանոնների մասին Rec(2006)2-rev հանձնարարականի 27.1 և 27.2 կանոնների համաձայն. 27.1 «Յուրաքանչյուր բանտարկյալի պետք է տրամադրվի ամեն օր առնվազն մեկ ժամ բացօթյա մարզվելու հնարավորություն, եթե եղանակը թույլ է տալիս: 27.2 Երբ եղանակը անբարենպաստ է, այլընտրանքային միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի բանտարկյալները կարողանան մարզվել»:

Այսպիսով, առաջարկում ենք Նախագծի 80-րդ հոդվածը փոփոխել՝ հստակեցնելով «իրադրության բարդացման դեպքեր» հասկացությունը և դրա դրսևորումները, միաժամանակ անբարենպաստ եղանակը չդիտարկել որպես զբոսանքից զրկելու կամ զբոսանքը դադարեցնելու հիմք, այլ ապահովել այլընտրանքային միջոցների անազատության մեջ գտնվող անձի օրական 1 ժամ տևողությամբ զբոսանքը ապահովելու համար:

8. ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿԱՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՎ ՄԵՐՉԱՎՈՐ ԱԶԳԱԿԱՆԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑԵԼԸ

Նախագծի 56-րդ կետի համաձայն. «Պահվող անձի հետ միաժամանակ տեսակցել թույլատրվում է առավելագույնը երեք չափահաս և երեք անչափահաս անձանց, բացի այդ թույլատրվում է միմյանց տեսակցել նաև նույն ՉՊՎ-ում միաժամանակ պահվող մերձավոր ազգականներին, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել»:

Նախագծի 57-րդ կետի համաձայն. «Պահվող անձին նախօրոք տեղեկացվում է մերձավոր ազգականի (հայր, մայր, ամուսին, կին, եղբայր, քույր, զավակներ, որդեգրողներ, որդեգրվածներ, տատ, պապ, թոռներ, ինչպես նաև ամուսնու ծնողներ) հետ մինչև մեկ ժամ տևողությամբ առնվազն մեկ տեսակցության մասին: Տեսակցությունը տրամադրվում է ժամը 10.00-ից մինչև 21.00-ն ընկած ժամանակահատվածում»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ պարբերության համաձայն՝ «Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին»:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 92-րդ կետի համաձայն՝ «կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականների և ընկերների հետ կարող է սահմանափակվել միայն արդարադատության պատշաճ իրականացման, անվտանգության պահանջների պահպանման և կալանավայրի բնականոն աշխատանքի ապահովման անհրաժեշտությամբ»: «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի (այսուհետ Հանձնարարական) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումը պետք է լինի այն նվազագույնը, որն անհրաժեշտ և համաչափ է դրա կիրառման իրավաչափ նպատակին:

Հանձնարարականի 2-րդ մասի 24.2-րդ կետը սահմանառում է, որ հաղորդակցությունն ու տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների և մոնիտորինգի, որն անհրաժեշտ է քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, հանցագործության կանխարգելման և հանցագործությունից տուժածների պաշտպանության համար, սակայն այդ սահմանափակումները, այդ թվում՝ դատական մարմինների որոշումներով նախատեսված կոնկրետ սահմանափակումները, պետք է ցանկացած պարագայում թույլատրեն շփումների ընդունելի նվազագույն մակարդակ:

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակումը պետք է ունենա ընդհանուր կամ անհատական բնույթ՝ կախված անհրաժեշտության սահմաններից և պայմաններից: Եթե սահմանափակման հիմքը ազատագրված անձի ազգականի վարվելակերպն է կամ այն վտանգը, որը նա կարող է ներակայացնել, ապա հաղորդակցության ու տեսակցությունների սահմանափակումը պետք է տարածվի միայն տվյալ ազգականի վրա²⁹:

²⁹ Տես ավելի մանրամասն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի [նիսիքընդմիջ](#) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների և «Հայաստանի

Մարդու իրավունքները և հիմնարար ազատություններն ենթակա են միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով, անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում և հետապնդում են մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներ³⁰: Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները չեն կարող ամբողջությամբ արգելվել պետության կողմից. իրավունքների սահմանափակումները բացարձակ չեն: Այսպիսով, հիմք ընդունելով մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հայեցակարգը գտնում ենք, որ Նախագծի «Էթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել» դրույթը խնդրահարույց է, ուստի այն պետք է փոխարինել «Էթե քրեական վարույթն իրականացնող մարմինն օրենքով սահմանված դեպքերում պատճառաբանված որոշմամբ այն չի արգելել» կարգավորմամբ: Միաժամանակ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ պարբերությունում նույնպես ավելացնել «պատճառաբանված» բառը:

Համանման խնդիր առկա է նաև Նախագծի 64-րդ կետում, մասնավորապես վերջինիս համաձայն՝ «Տեսակցությունից հրաժարվելու մասին պահվող անձի գրավոր դիմումի համաձայն տեսակցությունը կարող է փոխարինվել 1 հեռախոսագրույցով՝ մինչև 10 րոպե տևողությամբ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել»: Նշված կարգավորման մեջ ևս առաջարկում ենք ավելացնել պատճառաբանված որոշում կայացնելու պահանջը:

Բայցի այդ, Նախագծի 57-րդ կետում նշված է մինչև մեկ ժամ տևողությամբ առնվազն մեկ տեսակցություն ունենալու իրավունքի մասին, սակայն սահմանված չէ թե ի՞նչ հաճախականությամբ կարող է այդ իրավունքը իրացվել, ուստի առաջարկում ենք սահմանել ամեն օր մինչև մեկ ժամ տևողությամբ առնվազն մեկ տեսակցություն ունենալու իրավունքը:

Նախագծի 65-րդ կետի համաձայն. «Հեռախոսագրույցը՝ ներառյալ միջքաղաքային, պահվող անձին տրամադրվում է Պետի կողմից սահմանած ժամանակահատվածում: Հեռախոսագրույցը տեղի է ունենում վարչակազմի ներկայացուցչի ներկայությամբ»:

Վարչակազմի ներկայությամբ պահվող անձին հեռախոսագրույցի տրամադրումը խախտում է պահվող անձի՝ անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, որը երաշխավորված է ՄԻԵԿ 8-րդ հոդվածով, համաձայն որի՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: 2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական

Հանրապետության կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ:

³⁰ Enea v. Italy, ECtHR Judgment of 17 September 2009 (Application 74912/01), para140, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-94072>



հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Նշենք, որ պահվող անձը կարող է ունենալ տարբեր հեռախոսագրույցներ՝ փաստաբանի, մերձավոր ազգականների, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Անկախ նրանից, թե ում հետ է պահվող անձը ունենում հեռախոսային խոսակցություն, վերջինիս նկատմամբ հսկողությունն անընդունելի է:

Եթե ազգային օրենսդրությամբ կալանավորներին վերապահվում է հեռախոսագրույցներ ունենալու հնարավորություն, օրինակ՝ իրենց հարազատների հետ, բանտի հսկողության տակ գտնվող հեռախոսներից, ապա հեռախոսային հաղորդակցության վրա դրված սահմանափակումը կարող է «միջամտություն» կազմել նամակագրությունը հարգելու իրենց իրավունքի իրացման նկատմամբ՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով³¹:

Երբ ներպետական իրավունքը թույլատրում է միջամտությունը, այն պետք է ընդգրկի մարմինների կողմից լիազորությունների չարաշահումը կանխող երաշխիքներ: Բավարար չէ այնպիսի օրենք, որը սահմանափակվում է նրանով, որ մատնանշում է անձանց այն կատեգորիան, ում նամակագրությունը «կարող է ենթարկվել հսկողության» և նշում է համապատասխան իրավասու ատյանը՝ չանդրադառնալով միջոցի տևողությանը, ոչ էլ այն հիմնավորող հնարավոր պատճառներին³²:

Կարող է հաշվի առնվել նաև հսկողության ենթարկվող նամակագրության բնույթը: Նամակագրության որոշ տեսակներ, մասնավորապես՝ փաստաբանին ուղղված նամակագրությունը, պետք է օժտված լինի հավելյալ գաղտնիությամբ, մանավանդ, երբ նման նամակագրությունը պարունակում է մարմինների դեմ ուղղված բողոք³³: Ինչ վերաբերում է միջամտության տարածման տիրույթին և բնույթին, ապա կալանավորի ողջ նամակագրության հսկողությունն առանց հասցեատերերի կատեգորիաների տարբերակման, հանգեցնում է առկա շահերի միջև հավասարակշռության խախտման³⁴: Մոսկ այն մտավախությունը, որ կալանավորը կարող է խուսափել արդարադատությունից կամ

³¹ «Նուսրեթ Քայան և այլք ընդդեմ Թուրքիայի», § 36:

³² Կալոջերո Դիանան ընդդեմ Իտալիայի, §§ 32-33:

³³ «Յեֆիմենկոն ընդդեմ Ռուսաստանի», § 144:

³⁴ «Պետրովն ընդդեմ Բուլղարիայի», § 44:

ազդեցություն գործել վկաների վրա, ինքնին չի կարող արդարացնել նրա ողջ նամակագրությունն ինքնաբերաբար հսկելու ընդհանուր թույլտվությունը³⁵:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 65-րդ կետի կարգավորումից հանել «Հեռախոսագրույցը տեղի է ունենում վարչակազմի ներկայացուցչի ներկայությամբ» նախատեսությունը:

9. ՁԵՐԲԱԿԱԼ ՎԱԾՆԵՐԻՆ ՁՊՎ-ԻՑ ԱՉԱՏԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

Նախագծի 189-րդ կետի համաձայն. «Արգելանքից ազատված ձերբակալվածին հանձնում են անձնական փաստաթղթերը, թանկարժեք իրերը, դրամը, ինչպես նաև տեղեկանք նրան արգելանքի տակ պահելու ժամկետի և ազատման հիմքերի մասին՝ համաձայն Ձև 15-ի»:

Առաջարկում ենք ձերբակալվածին ազատելիս անձնական փաստաթղթերը, թանկարժեք իրերը, դրամը հանձնելիս նախատեսել ստացական կազմելու կամ տեղեկանքում լրացնելու կարգավորում:

Նախագծի 172-րդ կետի համաձայն. «Պահվող անձի կողմից պատճառված նյութական վնասը կարող են հատուցել նրա մերձավոր ազգականները կամ այլ անձինք՝ վերջիններիս համաձայնությամբ»: «Վերջիններիս համաձայնությամբ» ձևակերպումը վերաբերում է մերձավոր ազգականների համաձայնությանը, սակայն, կարծում ենք, որ պետք է պահանջվի պահվող անձի կողմից, ուստի առաջարկում ենք «վերջիններիս» բառը փոխարինել «պահվող անձի» բառերով:

10. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սահմանել, որ ՁՊՎ ընդունվող անձինք ՁՊՎ մուտք գործելուց հետո կամ բժշկական զննություն անցնելու պահանջով դիմում ներկայացնելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ենթարկում են բժշկական զննության:
2. Կատարել ՀՀ իշխանություններին ուղղված Կոմիտեի առաջարկությունները, մասնավորապես, ապահովել, որ ոստիկանությունում պահվող անձանց բժշկական զննությունից հետո կազմված արձանագրություններում լրացվում են i) տվյալ անձի կողմից ներկայացված հայտարարությունների շարադրանքը, որոնք վերաբերում են բժշկական զննմանը (ներառյալ նրա առողջական վիճակի նկարագիրը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած պնդումներ), ii) հանգամանալի զննության վրա հիմնված բժշկական օբյեկտիվ եզրակացությունների լրիվ շարադրանքը և iii)

³⁵ «Յանկաուսկասն ընդդեմ Լիտվայի», § 22:



առողջապահության ոլորտի մասնագետի դիտարկումները i)-ի և ii)-ի լույսի ներքո՝ մատնանշելով ներկայացված որևէ գանգատի և բժշկական օբյեկտիվ եզրակացության միջև համապատասխանությունը: Արձանագրությունը նաև պետք է ներառի իրականացված լրացուցիչ հետազոտությունների արդյունքները, մասնագիտական խորհրդակցությունների մանրամասն եզրակացությունները և վնասվածքների բուժման նպատակով իրականացվող բուժման և իրականացվող ցանկացած այլ ընթացակարգի նկարագիրը:

3. Ապահովել, որ բժշկական գնությունն իրականացվի ՀՀ ոստիկանությունից անկախ և իրավասու բժշկական անձնակազմի կողմից:
4. Ապահովել ՁՊՎ-ներում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացումը Ստամբուլյան արձանագրության չափանիշների համաձայն:
5. Երաշխավորել ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում իր ընտրած բժշկի կողմից առանձին բժշկական գնություն անցնելու իրավունքը ի լրումն ոստիկանության կողմից պատվիրակված ցանկացած բժշկական գնության:
6. Սահմանել, որ բժշկական գնության արդյունքները տրամադրվում են ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի անդամներին պատճառաբանված դիմումի հիման վրա:
7. Ներդնել ձեռքակալված անձանց բժշկական գնության աղյուսակների գաղտնիությունը ապահովող իրավական և վարչական կառուցակարգեր Կոմիտեի մշակած չափորոշիչների համաձայն: Մասնավորապես, ապահովել, որ խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի դրսևորումների արձանագրման դեպքում բժշկական գնությունն իրականացնող բժիշկը դեպքի մասին անհապաղ զեկուցում է ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին: Բժշկական անձնակազմը պետք է ձեռքակալված անձին տեղեկացնի զեկուցելու պարտավորության առկայության մասին, և որ համապատասխան մարմիններին զեկուցելը չի փոխարինում անձի կողմից պաշտոնական բողոք ներկայացնելուն:
8. Սահմանել, որ բժշկական գնությունների արդյունքները պահվում են ձեռքակալված անձի անձնական բժշկական քարտում, որը չպետք է հասանելի լինի ոստիկանության աշխատակիցների համար: Ոստիկանության աշխատակիցներին տրամադրված ցանկացած բժշկական տեղեկություն պետք է սահմանափակվի միայն այն

տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է ձերբակալված անձի համար լուրջ վտանգը կանխելու համար:

9. Ձերբակալված անձանց խուզարկության վերաբերյալ համապարփակ օրենսդրական կարգավորումներ նախատեսել «Ձերբակալվածների և կալանավորված անձնաց մասին» օրենքով և Քրեական դատավարության օրենսգրքով:
10. Սահմանել, որ բավարար հիմքերի և համապատասխան պատճառաբանության առկայության դեպքում միայն կարող է իրականացվել խուզարկություն:
11. «Ձերբակալվածների և կալանավորված անձնաց մասին» օրենքով նախատեսել խցի խուզարկության դեպքերը և հիմքերը:
12. Անհրաժեշտ է թողնել գործող կարգավորումը, այն է. «8. ՁՊՎ չեն ընդունվում այն անձինք, որոնց վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի որոշումը կամ ձերբակալման արձանագրությունը, կամ քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումը լրացված են խախտումներով»:
13. Վերացնել լոգանք ընդունելու ժամկետային սահմանափակումը՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ձերբակալված անձն ունի հասանելիություն լոգարանին և զուգարանին առանց սահմանափակումների, իրավունք ունի կանոնավոր լոգանք կամ ցնցուղ ընդունել կլիմայական պայմաններին համապատասխան ջերմաստիճանում՝ հիգիենայի անհրաժեշտությունից ելնելով, առնվազն օրական 15 րոպե տևողությամբ:
14. «Կանանց պահելու պայմանների առանձնահատկությունները» գլխում ներառել ազատազրկված կանանց հետ վարվեցողության միջազգային չափանիշները, ի թիվս այլնի, նախատեսելով, որ տղամարդիկ և կանայք պետք է առանձնացված պահվեն, և կանանց նկատմամբ հսկողությունը չպետք է իրականացվի տղամարդ հսկիչների կողմից:
15. Սահմանել, որ 45-րդ և 46-րդ կետերում նշված մարմիններին, գերատեսչություններին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները ուղարկվում են հասցեատիրոջն անհապաղ:
16. Նախագծի 80-րդ հոդվածը փոփոխել՝ հստակեցնելով «իրադրության բարդացման դեպքեր» հասկացությունը և դրա դրսևորումները, միաժամանակ անբարենպաստ եղանակը չդիտարկել որպես զբոսանքից զրկելու կամ զբոսանքը դադարեցնելու հիմք, այլ ապահովել այլընտրանքային միջոցներ անազատության մեջ գտնվող անձի օրական 1 ժամ տևողությամբ զբոսանքը ապահովելու համար:
17. Նախագծի 56-րդ կետում սահմանված «եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել» դրույթը խնդրահարույց է, ուստի առաջարկում ենք փոխարինել «եթե քրեական վարույթն իրականացնող մարմինը օրենքով սահմանված

դեպքերում պատճառաբանված որոշմամբ այն չի արգելել» կարգավորմամբ: Միաժամանակ առաջարկում ենք «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ պարբերությունում նույպես ավելացնել «պատճառաբանված» բառը:

18. Նախագծի 57-րդ կետում նշված է մինչև մեկ ժամ տևողությամբ առնվազն մեկ տեսակցություն ունենալու իրավունքի մասին, սակայն նշված չէ թե ի՞նչ հաճախականությամբ կարող է այդ իրավունքը իրացվել, ուստի առաջարկում ենք սահմանել ամեն օր մինչև մեկ ժամ տևողությամբ առնվազն մեկ տեսակցություն ունենալու իրավունքը:
19. Նախագծի 65-րդ կետի կարգավորումից հանել «Հեռախոսագրույցը տեղի է ունենում վարչակազմի ներկայացուցչի ներկայությամբ» նախադասությունը:
20. ՁՊՎ-ում պահվող անձին ազատելիս անձնական փաստաթղթերը, թանկարժեք իրերը, դրամը հանձնելիս նախատեսել ստացական կազմելու կամ տեղեկանքում լրացնելու կարգավորում:
21. Նախագծի 172-րդ կետում նշված «վերջիններիս» բառը փոխարինել «պահվող անձի» բառերով: